



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏՔ ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Քրիստոնեություն եւ Մշակույթ	էջ 2
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐԲԷՆ
 (19.1-11)

Ահա Տէրը թիթեւագնաց ամպի վրայ նստած Եգիպտոս պիտի գայ: Անոր դիմաց Եգիպտոսի կուռքերը պիտի դողան, եգիպտացիներու սիրտը պիտի հալի: Եգիպտացիները եգիպտացիներուն դէմ պիտի ելլեն, եղբայրը եղբօր դէմ պիտի պատերազմի եւ ընկերը՝ իր ընկերոջ դէմ, քաղաքը քաղաքի դէմ եւ թագաւորներ թագաւորներու դէմ: Եգիպտացիներ իրենց հոգեկան կորովը պիտի կորսնցնեն, որովհետեւ անոնց ծրագիրները պիտի խառնեմ, ուստի անոնք խորհուրդ պիտի ուզեն իրենց աստուածներէն ու կուռքերէն, ոգեհարցներէն ու վհուկներէն: Խստասիրտ տէրերու ձեռքը պիտի մատնեմ զիրենք, անգուժ թագաւորներ պիտի տիրեն անոնց, - կ'ըսէ Նրկնային Զօրքերու Տէրը: Եգիպտացիներ գետափեայ ջրակոյտերէն պիտի խմեն իրենց ջուրը, որովհետեւ Նեղոսը պիտի նուազի ու ցամքի: Նեղոսէն բացուած առունները պիտի ճահճանան եւ ամբողջ գետը պիտի ցամքի. բոլոր մարգագետինները, եղէգնուտներն ու պրտուի շամբուտները եւ մամուռով պատուած մարգագետինները պիտի չորնան: Նեղոսի շուրջը աճած ամէն կանաչութիւն, եւ գետեզրին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորնան: Նեղոսի ձկնորսներն ու բոլոր կարթընկէցները պիտի տրտմին ու հեծեն, ցանցորդներն ու ուռկանաւորները սուգ պիտի ընեն: Նրբահիւս կտաւագործները սուգ պիտի ընեն: Նրբահիւս կտաւագործներն ու բեհեզ գործողները պիտի անճրկին, բոլոր վարպետ արհեստաւորները եւ գարեջրագործները պիտի տրտմին եւ յուսալքուին: Արդարեւ յիմար են Տայանիսի

իշխանները, փարաւոնին իմաստուն կոչուած խորհրդականները, որոնք յիմար խորհուրդներ կու տան:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԷՆ
 (2.1-10)

Այնուհետեւ, տասնըչորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բառնաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ երթամ: Այնտեղ Երուսաղէմի եկեղեցիին զեկոյց տուի հեթանոսներուն մէջ կատարած քարոզութեանս մասին: Առանձնաբար զեկոյց տուի նաեւ եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի իմ ուղղութեանս մասին իրենց հաւանութիւնը ունենամ, եւ զուր տեղ աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին որ թլփատուի ինծի ընկերացող Տիտոսը, որ հեթանոսութենէ կու գար: Թլփատութիւն պահանջողները քանի մը կեղծ քրիստոնեաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսիսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլաք թէ ճշմարիտ էր ինչ որ ձեզի քարոզեցինք:

Գալով անոնց որոնք եկեղեցւոյ ղեկավարները կը համարուէին, ինծի համար բնաւ կարեւորութիւն չունի թէ անցեալին ի՞նչ եղած են անոնք: Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դներ: Արդ, ղեկավար համարուած այդ առաքեալները ոեւէ նոր բան չըսին ինծի այդ մասին: Ընդհակառակը, երբ տեսան թէ Աստուած ինծի վստահած է հեթանոսներու քարոզութիւնը - որովհետեւ Աստուած ինչպէս Պետրոսի

Աստուած
մարդոց միջեւ
խտրութիւն չի
դներ:

առաքելութիւնը յաջողցուց հրեաներուն մէջ, նոյնպէս ալ իմ առաքելութիւնս յաջողցուց հեթանոսներուն մէջ - , այն ատեն Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք եկեղեցւոյ սիւները կը համարուէին, ճանչցան Աստուծոյ ինծի տրուած շնորհքը, իմ եւ Բառնաբասի ձեռքը թօթուելով հաւանութիւն տուին որ մենք հեթանոսներուն մէջ աշխատինք, իսկ իրենք՝ հրեաներուն: Միայն խնդրեցին որ Երուսաղէմի աղքատներուն օգնել չմոռնանք. բան մը, որուն համար ես սրտանց աշխատեցայ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(12.35-44)**

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել թէ Քրիստոս, խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է, երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ.

“Տէրը ըսաւ իմ Տիրոջս.–

աչ կողմս նստէ,

մինչեւ թշնամիներդ ոտներուդ տակ դնեմ որպէս պատուանդան”:

«Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է»:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր. «Զգո՛յ՜ յեղէք օրէնքի ուսուցիչներէն որոնք կը սիրեն փառաւոր զգեստներով շքեղ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիր բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց. «Վստա՛հ գիտցէք, որ այս թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ ան՝ հակառակ չքաւոր ըլլալուն՝ ինչ որ ունէր նետեց, իր ամբողջ ապրուստը»:

**ՔՐԻՍՏՈՒԵՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՄՇԱԿՈՅԹ
ԳԱՌՆԻԿ Ք.Գ.**

«Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին»,
Շարական Թարգմանչաց:

Շատ բարդ նիւթ մըն է ասիկա:

Ի՞նչ է քրիստոնէութիւնը, ի՞նչ է մշակոյթը, ի՞նչ է անոնց կապը եւ փոխազդեցութիւնը: Այս եւ այլ հարցումներու շարք մը կարելի է դնել, եւ ընդարձակ աշխատութեան մը ձեռնարկել, սակայն դարձեալ զգալ անսպառ նիւթը:

Այս յօդուածի սահմանին մէջ, պիտի արագօրէն անդրադառնամ հիմնական մի քանի կէտերու:

Ի՞նչ է քրիստոնէութիւնը:

Այն շարժումն է, որ Յիսուս Քրիստոսի հաւատքին վրայ կը հիմնուի:

Ո՞վ է Յիսուս Քրիստոս:

Մարմնացեալ Բանն Աստուած, որ մեր մէջ բնակեցաւ, եւ իբր գառն՝ իր վրայ առնելով աշխարհի մեղքը, խաչ բարձրացաւ: Եւ ապա, ինչպէս ժամամուտը կ'ըսէ՝ «մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ գկեանս պարգեւեաց»: Նաեւ ան է Գերագանց Ուխտին երկնառաք Վարդապետը:

Ի՞նչ կը նշանակէ հաւատալ:

Եբրայեցիներու նամակին մէջ գրուած է. «Ի՞նչ է հաւատքը: Հաւատք կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն՝ որոնց կը յուսանք, եւ համոզուած ըլլալ այն բաներուն՝ որոնք չեն երեւիր» (Եբր 11.1): Ուրեմն, հաւատալը վստահութիւն է յուսացուած իրականութիւններու, եւ համոզում աներեւոյթ իրականութիւններու:

Սակայն որո՞նք են «յուսացուած բաներ»ը եւ որո՞նք են համոզումի աներեւոյթ իրականութիւնները:

Ըստ իս,

- Ա.– 1.– Մեծ փրկութիւնը կամ ազատագրութիւնը.
- 2.– Աստուծոյ փառքին կամ թագաւորութեան մասնակցութիւնը բոլոր անոնց՝ որ կ'ապաշխարեն եւ հաւատարիմ են Աստուծոյ.
- 3.– Տիրոջ օրուան գալուստը:
- Բ.– 1.– Աստուած՝ որ տիեզերքը ստեղծեց եւ կեանքի աղբիւրն է.
- 2.– Որդին՝ որ Աստուծոյ ստեղծագործութեան միջոցն է, եւ մեր փրկիչը.
- 3.– Ս. Հոգին՝ որ պարգեւներ կը բաշխէ. 4.–

Հրեշտակները՝ որոնք Աստուծոյ ծառայող հոգիներ են. եւ 5.- Երկինքի թագաւորութիւնը:

Անշուշտ յուսացուածները եւ համոզումի աներեւոյթ իրականութիւնները անապացուցանելի են, որովհետեւ տեսանելի, ստուգելի, շօշափելի եւ փորձարկելի չեն անոնք (ասիկա ըսել չէ, թէ փորձառութեան մէջ չեն գար): Աստուած չի տեսնուիր, բայց կը հաւատաս անոր գոյութեան: Քրիստոս չի տեսնուիր, բայց կը զգաս անոր ներկայութիւնը: Ս. Հոգին չի տեսնուիր, բայց անոր ներգործութիւնը հրեհէ կը ձգէ սրտիդ մէջ...

Ի՞նչ է մշակոյթը:

Պարզագոյն բացատրութեան մը մէջ, մշակոյթը ամբողջութիւնն է հոգեւոր, բարոյական, իմացական, գիտական ու գեղարուեստական աւանդոյթներուն, արտայայտութիւններուն եւ ստեղծագործութիւններուն:

Քրիստոնէութիւն եւ մշակոյթ իրարու հետ յարի՞ր են, թէ ոչ:

Նախ սա ըսեմ, որ քրիստոնէութիւնը ինքնին մաս կը կազմէ մշակոյթին, զայն բաղկացնող տարրերէն մէկն է: Մշակոյթէն դուրս իրականութիւն մը չէ անիկա: Քրիստոնէութիւնը եկաւ մշակոյթի մը մէջ, եւ տարածուեցաւ, ընկալուեցաւ ու կ'ընկալուի բազմազան մշակոյթներու մէջ:

Յիսուս երբ քարոզեց եւ ուսուցանեց, հաւատքի եւ մշակոյթի երկուութեան գաղափարը չունէր: Հին աշխարհին մէջ արդէն իսկ չկար ատիկա: Մշակութային բոլոր արտայայտութիւնները թափանցուած էին կրօնքով եւ զուտ կրօնական պաշտօն ունէին, այլ խօսքով՝ մշակոյթը կրօնական էր ըստ էութեան: Անիկա չկար եւ չէր տեսնուեր իբր մարդկային հոգիի եւ մտքի արտակրօնական եւ ուրոյն արտայայտութիւն:

Այդ մշակոյթը Աստուածակեդրոն բնոյթ ունէր:

Արդի ժամանակներուն մէջ է, որ մշակոյթը տեղ տեղ կը ներկայանայ ոչ թէ միայն իբր արտակրօնական ուրոյն արտայայտութիւն, այլեւ իբր ապակրօնական արտայայտութիւն: Ապակրօնական մշակոյթը անհատապաշտ եւ մարդակեդրոն է: Եւ քրիստոնէութիւնը աններդաշնակելի է այդ տեսակ մշակոյթին հետ: Ուստի կը ձգտի զայն նորոգելու. Աստուծոյ եւ մարդուն միատեղ բնակութեան վայրի վերածելու գայն:

Տասնաբանեայի առաջին երկու պատուէրներն են. Միակ Աստուծոյ՝ զատ՝ ուրիշ աստուածներ չունենալ, եւ կուռք չշինել (Ելք 20.3-4):

Որեւէ մշակոյթ որ ինքնապատակ է, նախ ուրիշ աստուածներ կը պաշտէ, եւ երկրորդ՝

կուռք կը շինէ: Ինքնապատակ մշակոյթին մէջ յայտնի կ'երեւայ մարդկային կամքին եւ ցանկութիւններուն տիրապետող ներկայութիւնը: Անոնք, ըստ Տասնաբանեայ Պատուիրաններուն, մեղքի կը մատնեն, եւ հետեւաբար՝ կորուստի:

Քրիստոնէութիւնը Աստուծոյ կամքին հնազանդութիւն կ'ուզէ: Սխալ չհասկնանք: Քրիստոսի Աւետարանը կամազուրկ մարդիկ չէ որ կ'ուզէ, եւ ոչ ալ կ'ուզէ կամազուրկ մարդոց աշխատանքը:

Որեւէ աշխատանք մարդուն կամքին միջոցով է, որ կ'ըլլայ: Աստուծոյ հաճելի աշխատանքը այն է, որ մարդուն կամենալովը երկինք կը վերընծայուի: Կամ կ'իրագործուի Աստուծոյ կամքին ունկնդրութեամբ:

Պօղոս առաքեալ ըսած է, թէ Քրիստոս զինք զրկած է, որպէսզի աւետարանէ առանց խօսքի ճարտարութեան դիմելու (Ա. Կր 1.17): Ի՞նչ է միտքը: Ո՛չ թէ առաքեալը խօսքի ճարտարութիւնը մերժած է: Ինք որ նամակներ գրած է եւ աւետարանած է, շատ լաւ գիտէր խօսքի կազմակերպ ներկայացման ազդեցութիւնը: Անոր ըսել ուզածը այն էր, թէ երբ ճարտարութիւնը կը դառնայ նպատակ, ապա աւետարանական պատգամը կը տկարանայ, նոյնիսկ կը կորսուի ճարտարութեան ձեռնածոյթիւններուն մէջ:

Այս նոյն տրամաբանութեամբ կարելի է ըսել, թէ երբ մշակոյթը կը դառնայ նպատակը եւ ոչ թէ աւետարանական պատգամը, այն ատեն Քրիստոսի խաչելութեան մասին քարոզութիւնը իր ոյժէն կը պարպուի (նոյն, անդ):

Աստուծոյ համար ընդունելի մշակոյթը անիկա է, որ մարդոց կեանքին մէջ համաձայն Քրիստոսի լոյսին կը թարգմանէ երկնային իմաստութիւնները, թէ բանիւ եւ թէ գործով: Այլեւ անիկա է, որ չ'այլասերեր:


Ո՞ր մշակոյթն է, որ կ'այլասերէ:

Անիկա որ մարդուն վրայ կեդրոնացած է կամ մարդ էակի ես-ին:

Ես-ի մշակոյթը հաւատքին մերժումն է:

Հաւատքի մշակոյթը մարդուն հաստատումն է կեանքին մէջ:

Հաւատքի մշակոյթը՝ կեանքին համար է, առաւել կեանքին:



ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ
ՀԱՄԱՐ

Ս. Գիրքի Սերտոռոհաիւն

Հաբաթ 17 Հոկտեմբեր 2009

Հաբաթ 24 Հոկտեմբեր 2009

Երեկոյեան ժամը 7.00-ին

Մոսթաբէլի Հայ Կեդրոնի
Հոգաբարձոհաեան Ժողովարաւ

ՀԻՎԱՌԱԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԱԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեանի.

514 331 5445 x203 կամ 514 909 5203



ՀՈՎԻԸ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ


Անոնք որ կը փափաքին
հովիին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քհնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

Լոյս տաւ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I

DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par

Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱԼԱՐԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝ ՁՐԻ
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կը խտրողի առջամբ ներկայանալ
ԵԿԵՂԵՃՈՅԱ ԳՐԱՏԵՆԵԱԿ

Սոյն թերթիւն ե-առաւստոյ ստանալու
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՐՈՂԱՐԿԵՃԵՔ
eglise58@sourphagop.com-ին

Նախորդ թիւերը կրնաք գտնել
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԲԵՁԻՆ ՎՐԱՅ